ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

97.02

303 A 4502

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1981 թ.

# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ

## ՀԵՌԱԿԱՅՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԿ(բ)Կ ԿԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

ՅԵՐԵՎԱՆ 1937

Պատվեր № 23 Գլավլիտ № 383
Հանձնված է արտադրության 27-ին մայիսի 1937 թ.
Ստորագրված է տպագրելու 2-ին հունիսի 1937 թ.

---

«Խորհրդային Հայաստան»-ի հրատ. տպարան, Յերևան

# ՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Կոլտնտեսային և բրիգադային պատի թերթերի խմբագիրների հեռակա ուսուցման դասընթացների աշխատանքներին նոր թափ հաղորդելու, ինչպես նաև ուսուցման առաջին կիսամյակի արդյունքները պարզելու և ամփոփելու նպատակով հուլիսի 15—30-ը անց է կացվելու հեռակայողների առաջին քննությունը:

Քննությունները հաջող կազմակերպելու համար անհրաժեշտ է կատարել լուրջ նախապատրաստական աշխատանք:

Շրջանային այն թերթերը, որոնք մինչև այսօր պահանջվող քանակությամբ կոնսուլտացիաներ չեն կազմակերպել, մինչ քննությունները պետք է կազմակերպեն կոնսուլտացիաներ, և յուրաքանչյուր հեռակայողին պարզաբանեն նրան անհասկանալի մնացած հարցերը:

Քննությունների մասին առնվազն յերկու շաբաթ առաջ պետք է իրազեկ դարձնել հեռակայողներին, վորպեսզի նրանք հնարավորություն ունենան նախապատրաստվելու:

Անհրաժեշտ է շրջանային թերթում նյութեր տպագրել քննությունները նախապատրաստելու, հեռակա

ուսուցման հաջողությունների և թերությունների մասին, այդ հարցերի վրա բևեռելով հեռակայողների ուշադրությունը։

Քննությունների կարգը հետևյալն է՝

1. Հեռակայողը քննություն է տալիս այն առաջադրանքներից, որ նա ուսումնասիրել է։

2. Քննությունը կատարվում է անհատորեն.

3. Քննող հանձնաժողովի նախագահն է շրջանային թերթի խմբագիրը, իսկ հանձնաժողովի երկու անդամները պետք է վերցնել կուսշրջկոմից և լուսբաժնից։

4. Յուրաքանչյուր հեռակայողի քննելիս պետք է տալ համապատասխան գնահատական թվանշաններով (2, 3, 4, 5) ըստ առանձին առաջադրանքների։

Հեռակայողներին քննելիս և գնահատական տալիս պետք է անպայման հաշվի առնել նաև նրա կատարած աշխատանքը պատի թերթում (պատի թերթի կանոնավոր լույս ընծայումը, նրա բովանդակության բարձրացումը, քաղաքականապես հագեցված լինելը, և այլն)։ Այդ տեսակետից անհրաժեշտ է մինչ քննությունները ստուգել և պարզել, թե հեռակայողն ինչ չափով է մասնակցում պատի թերթի աշխատանքներին, ինչպես է նա պայքարում լավ պատի թերթ ունենալու համար։

Հեռակայողի քննության գնահատականը շատ մաքուր ձևով պետք է գրվի հեռակայողի քննության գրքույկի մեջ և հանձնվի իրեն, իսկ քննությունների արդյունքների մասին յեղած նյութերը պետք է պահել շրջանային թերթի խմբագրությունում։

Հեռակայողի քննության գրքույկը պետք է լրացնել հետևյալ կերպ. —

Գրքույկի առաջին էջում յեղած հարցերը պարզ են, միայն պետք է հիշել, վոր 4-րդ հարցին (կոլտնտեսութ.) պետք է պատասխանել նշելով գյուղի անունը, վորտեղ գտնվում է կոլտնտեսությունը: 6-րդ հարցին (դասընթաց՝ ընդունվել է) պետք է պատասխանել այսպես՝ 1936—1937 թ.:

Յերկրորդ էջում նշումներ են կատարվում, յերբ հեռակայողը հաճախում է կոնսուլտացիային: Հետևաբար հեռակայողը կոնսուլտացիայի գալիս, իր հետ պետք է ունենա իր քննության գրքույկը, վորպեսզի կոնսուլտանտը նշումներ անի նրա մեջ:

Գրքույկի 3-րդ էջում նշվում է հեռակայողի առաջադիմությունը, այսինքն տրվում են գնահատականները (թվանշաններով) ըստ առանձին առաջադրանքների:

Այս տարի հեռակայողներին տրվելու յե նաև մի առաջադրանք՝ հայոց լեզվի մասին: Նկատի ունենալով այդ առաջադրանքի ծավալի մեծությունը, այն բաժանված է լինելու 8 մասերի (դասերի): Հետևապես այդ առաջադրանքի համար պետք է կազմակերպել վոչ թե 1—2 կոնսուլտացիա, այլ առնվազն 4—5 կոնսուլտացիա:

Այդ առաջադրանքի ամեն մի դասի համար հեռակայողին պետք է տալ առանձին գնահատական, այդ նպատակով գրքույկի «մայրենի լեզու» բաժնում նըշված են 1–8 թվանշաններ: Հենց դրանց կողքին (յերկ-

ցած կոնսուլտացիաների մասին, յեթե հեռակայողը իրոք մասնակցել է կոնսուլտացիաներին:

Հեռակայողների քննությունը լուրջ և պատասխանատու գործ է: Այդ աշխատանքը պետք է սկսել և ավարտել բոլշևիկյան կազմակերպվածությամբ: Ամբողջ աշխատանքի հիմքում պետք է դնել կոլտնտեսություններում բոլշևիկյան մարտական մամուլ և դրա համար քաղաքականապես կոփված կադր, ստեղծելու լոզունգը:

Ի տ. «Խ. Հ.»-ի պատ. խմբագրի

**Մ. ԴԱՎԹՅԱՆ**

Հեռակա դասընթացների ղեկավար՝

**Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

A 4502

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0039094

[014]
~~244~~ 2
A I/4502

ՏՐՎՈՒՄ Ե ՁՐԻ

# МЕТОДИЧЕСКОЕ ПИСЬМО

## Об организации первого зачета заочников

Издательство ЦК КП(б) А «Хорурдаин Айастан»
Ереван 1937 г.

1940 г.